Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ 1

(Համաձայն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/30 որոշման)
N ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցմամբ գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Ջրվեժ «23» «սեպտեմբերի» 2017թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թադևոսյան, Գ.Բաղալյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

1.Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 26-րդ կետի 7-րդ ենթակետը հանձնաժողովի անդամների պահանջով հրավիրվել է արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1)ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատելու մասին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/30 որոշման համաձայն «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել 2016 թվականի 4-րդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկ, ըստ որի ընկերության համախառն եկամտի ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 18 880 308 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 13-ի տրված եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվան նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է ՝ 880 308 ՀՀ դրամ:

Քանի որ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացրած որոշման մեջ տրված տվյալները հակասական են, գնահատող հանձնաժողովի հետագա գործառույթները իրականացնելու նպատակով առաջարկել Ջրվեժ համայնքի ղեկավար Ռ. Պետրոսյանին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստանալ պարզաբանում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ին ներկայացնել գրություն ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի ընդհատման մասին և տրամադրել նիստի արձանագրության պատճեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Նիստը ընդհատվում է մինչև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանում ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:30-ը, հասցեն՝ Ջրվեժի համայնքապետարան՝ գ. Ջրվեժ, Մելքոնյան 76:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան

Անդամներ՝ Ս.Թադևոսյան

Գ.Բաղալյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան